Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Armenian Territorial Development Fund

N 199 «27» հունիսի 2024թ.

«Բախմաչգազբուդսերվիս» ՍՊ ընկերության

տնօրեն պարոն Արտակ Սաղաթելյանին

«Բախմաչգազբուդսերվիս» ՍՊ ընկերության

հայաստանյան մասնաճյուղի տնօրեն պարոն Բ. Սաղաթելյանին

Հարգելի պարոնայք,

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև Հիմնադրամ) «Բախմաչգազբուդսերվիս» ՍՊ ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն), ի դեմս «Բախմաչգազբուդսերվիս» ՍՊ ընկերության հայաստանյան մասնաճյուղի միջև 2024 թվականի մայիսի 31-ին կնքվել է «Կապալային աշխատանքների կատարման պետական գնման» թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/44-3 պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.3-րդ կետով նախատեսված է, որ աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով՝ շինարարական աշխատանքների կատարման ժամկետը սահմանելով 640 օր:

Հետագայում նկատի ունենալով ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու հանգամանքը և հիմք ընդունելով Պայմանագրի 8.13-րդ կետը, Հիմնադրամի կողմից 31.05.2024 թվականին Ընկերությանն է ուղարկվել ծանուցում, որին կից ներկայացվել է թիվ 1 համաձայնագիրը՝ միաժամանակ սահմանելով ծանուցումը ստանալուց հետո ստորագրված համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները ներկայացնելու 15 օրյա ժամկետ:

Հայաստանի Հանրապետություն, 0037, Երևան, Կ. Ուլնեցու 31
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123

K. Ulnetsu st. 31, Yerevan, 0037, Republic of Armenia
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123

Հաշվի առնելով այն, որ ծանուցմամբ սահմանված ժամկետում Ձեր կողմից չեն ներկայացվել ստորագրված համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները և ղեկավարվելով Պայմանագրի 8.13-րդ կետի դրույթներով, որի համաձայն՝ Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է, Հիմնադրամի և Ընկերության միջև 2024 թվականի մայիսի 31-ին կնքված «Կապալային աշխատանքների կատարման պետական գնման» թիվ ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/44-3 պայմանագիրը համարվում է միակողմանիորեն լուծված:

Սույնով տեղեկացվում եք նաև, որ Ձեր կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագրերի 1.4-րդ կետի պահանջներից ելնելով, Պայմանագիրը չկատարելու համար Հիմնադրամը պահանջ է ներկայացնելու «Ակբա բանկ» ԲԲ ընկերություն՝ պայմանագրի ապահովման՝ 1,200,000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) և որակավորման ապահովման՝ 360,000,000 (երեք հարյուր վաթսուն միլիոն) ՀՀ դրամ գումարները, ինչպես նաև հայտի ապահովման գումարը ստանալու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Կ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

Կատարող՝ Նազելի Տեր-Պետրոսյան
Հեռախոս՝ (060) 50 15 60 (502)

Հայաստանի Հանրապետություն, 0037, Երևան, Կ. Ուլնեցու 31
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123

K. Ulnetsu st. 31, Yerevan, 0037, Republic of Armenia
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123